USAID
ԱՄԵՐԻԿԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԻՑ

Մարդկային զարգացման միջազգային կենտրոն
International Center for Human Development

COUNTERPART INTERNTATIONAL

Policy Brief
Համառոտագիր

Աջակցություն քաղաքացիական հասարակության զարգացման քաղաքականության, կարգավորման և ինստիտուցիոնալ բարեփոխումներին Հայաստանում

Supporting Policy, Regulatory and Institutional Reforms for Civil Society Development in Armenia

Սույն հրապարակումը հնարավոր է դարձել իրականացնել Քաունթերփարթ ինթերնեշնլի Հայաստանյան ներկայացուցչության կողմից իրականացվող Քաղաքացիական հասարակության և տեղական ինքնակառավարման աջակցության ծրագրի, և Ամերիկայի Միացյալ Նահանգների բնակչության առատաձեռն աջակցության շնորհիվ՝ ԱՄՆ Միջազգային Զարգացման Գործակալության No AID-111-LA-10-00001 համագործակցության պայմանագրի DFD-A-00-09-00141-00 պայմանագրի շրջանակներում Մարդկային զարգացման կենտրոնի միջոցով: Սույնի բովանդակությունը, արտահայտված տեսակետերը և կարծիքները պատկանում են հեղինակներին՝ Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի պատասխանատվության տակ, և հնարավոր է, որ չհամընկնեն Քաունթերփարթ ինթերնեշնլի Հայաստանյան ներկայացուցչության, ԱՄՆ Միջազգային Զարգացման Գործակալության և ԱՄՆ կառավարության տեսակետերի հետ:

This publication was made possible by the support of Counterpart International's Armenia Representation and the generous support of the American people through the United States Agency for International Development (USAID) under Associate Cooperative Agreement No. AID-111-LA-10-00001, under Cooperative Agreement Number DFD-A-00-09-00141-00 through the International Center fro Human Development. Content, views and opinions expressed herein are those of the authors, and the responsibility of the International Center fro Human Development, and do not necessarily reflect the views of Counterpart Armenia, USAID or the United States Government.”

Քաղաքացիական հասարակության կառույցների զարգացման կանոնակարգման խնդիրները

Համառոտագիր

Մարդկային զարգացման միջազգային կենտրոն

Գործող օրենսդրության վերանայման հրամայականը

Հայաստանի ժողովրդավարացման գործընթացում հստակ առանձնանում են հասարակության փոխակերպման մի շարք փուլեր՝ խորհրդային ժառանգության վերաիմաստավորում, արևմտյան արժեքների և ինստիտուտների ներմուծում և դրանց բախման արդյունքում՝ սեփական արժեքների և ինստիտուտների ձևավորում: Մեր հասարակությունը մտնում է փոխակերպման հերթական փուլը. ձևավորման հախուռն տրամաբանությանը հաջորդելու է գալիս զարգացման հրամայականը, որը քաղաքականության, իրավական կարգավորման և միջամտության որակապես այլ միջավայր ու գործիքներ է պահանջում: Փոխակերպման փուլերի սահմանագծին կարևորվում է նախորդ փուլի արդյունքների ամփոփումն ու ծագող մարտահրավերների հստակեցումը:

Նախորդ փուլի հիմնական արդյունքների շարքում հատկանշական է հասարակական նոր կառույցի՝ ոչ-պետական և ոչ-առևտրային կազմակերպությունների ինստիտուցիոնալ կայացումը: Երկրորդ արդյունքը, թերևս, այդ կառույցների առաքելությունների, ուստի և՝ գործունեության հստակեցումն ու տարբերակումն է: Երրորդ արդյունքը, այս կառույցների զարգացման խնդիրների ու դրանց տարբերությունների գիտակցումն է, դրանց բարձրաձայնումն ու համապատասխան լուծումների պահանջի առաջադրումը:

Սոցիալական տարբեր խավերի շահերի պաշտպանությանը հետամուտ հասարակական կազմակերպություններն ու իրավապաշտպան կառույցները, հետազոտական ու վերլուծական կենտրոնները, համայնքային ու խոցելի խմբերին ծառայություն մատուցող հասարակական կառույցները, ստեղծագործական միություններն ու մասնագիտական միավորումները զարգացման ընդհանրական նպատակ ունեն. սեփական անդամների և/կամ շահառուների շահերը պաշտպանել հնարավորինս գործուն ու արդյունավետ կերպով:

Հարկ է առանձնացնել զարգացման համար առանցքային երկու նախապայմաններ. ինստիտուցիոնալ կարողություններ և ֆինանսական կայունություն: Եթե նախորդ տասնամյակում առաջին նախապայմանը որոշակիորեն կայացել է, ապա երկրորդը օրակարգային խնդիր է:

Այս առումով քաղաքացիական հասարակության ինստիտուտների իրավական կանոնակարգումը ներկայում երկու հիմնական մարտահրավեր ունի. սահմանել այս կառույցների թափանցիկության և հաշվետվողականության սկզբունքները և միաժամանակ ապահովել խաղի այնպիսի կանոններ, որոնք թույլ կտան դրանց անխափան շարունակել իրենց գործունեությունը, մասնավորապես խթանել ֆինանսապես ինքնաբավ կառույցների կայացումը:

Իսկ ինչպե՞ս

Խնդրի լուծմանը տեխնիկական մոտեցումները տարբեր են. կանոնակարգել ոչ պետական, ոչ առևտրային կազմակերպությունների գործունեությունը մեկ ընդհանրական, համապարփակ, ցանկալիորեն՝ ազատական և ճկուն օրենքի հիմնարար դրույթներով, կամ հաշվի առնելով հասարակական կառույցների առանձնահատկություններն ու զարգացման կարիքների տարբեր ընկալումները՝ փորձել դրանց գործունեությունը կարգավորել առանձին օրենքներով: Երկրորդ մոտեցումն առաջին հայացքից թերևս առավել գայթակղիչ է թվում, քանզի ակնկալվում է, թե առանձին օրենքները կմշակվեն մանրակրկտորեն հաշվի առնելով կառույցների առանձնահատուկությունները: Սակայն այս մոտեցման թաքնված թակարդը հենց նման մանրամասներն են, որոնք զարգացումը խթանելու փոխարեն պիտի

Երևան 0001
Սայաթ Նովա 19
Հեռ.՝ +374 10 582638
Ֆաքս՝ +374 10 527082

mail@ichd.org
www.ichd.org

պարփակեն կանոններ, որոնք ըստ ամենայնի շատ արագ վերածվելու են սահմանափակումների, որովհետև հայաստանյան իրողություններում ժողովրդավարական համակարգի հիմնական առանցքներից մեկը՝ օրենքի գերակայությունը, դեռևս շատ հեռու է կատարելությունից: Օրենսդրական լավագույն լուծումները կարող են հակառակ՝ զարգացմանը խոչընդոտող դեր կատարել ոչ պատշաճ կիրարկման պարագայում, ինչին այնքան հաճախ ականատես ենք լինում:

Միաժամանակ, ինչպես համաձայնվում են գրեթե բոլորը, հասարակական կազմակերպությունների գործունեությունը կարգավորող գործող օրենսդրությունը բավականին ազատական է: Ուստի, ի տարբերություն երկրորդ մոտեցման, ընդհանրական օրենքն ըստ էության կարող է սահմանել խաղի հիմնարար կանոնները, միաժամանակ լրացուցիչ իրավունքներ և հնարավորություններ և դրանց համարժեք՝ գործունեության թափանցիկության և հաշվետվողականությանը վերաբերվող պարտականություններ սահմանելով և ապահովելով այնպիսի ճկունություն, որը թույլ կտա խաղացողներին այն պահին, երբ վերանայման անհրաժեշտությունն արդեն հասունացել է, հանդես գալ նոր օրենսդրական առաջարկներով:

Օրինակ՝ սոցիալական խնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպություններին կարելի է օրենսդրորեն հնարավորություն ընձեռել ձեռք բերել հանրային շահերին (public benefit) ծառայող կազմակերպության կարգավիճակ, ինչը ենթադրում է պետական պատվեր և պետական բյուջեից սուբսիդավորում՝ թափանցիկության ու հաշվետվողականության լրացուցիչ պատասխանատվություն վերցնելու պատրաստակամության պարագայում: Վերլուծական կենտրոնները կարող են հնարավորություն ստանալ սեփական ֆինանսական կայունությունն ապահովելու նպատակով ձևավորել նպատակային դրամագլխային ֆոնդեր (endowment), իսկ ստեղծագործական միությունները՝ հեռահար նպատակային ծրագրեր իրականացնել առանց օրենսդրորեն կաշկանդված լինելու հասարակական կազմակերպությունների մասին ներկա օրենքով պարտադրված սուղ ժամկետներով: Եվ կրկին՝ թափանցիկության ու հաշվետվողականության համարժեք պարտավորություններ ստանձնելով:

Համառոտագիրը մշակվել է 2011թ-ի հուլիսի 4-ին կայացած՝ «Հայաստանում քաղաքացիական հասարակության զարգացումը կանոնակարգող միջավայրը» վերնագրով քննարկման մասնակիցների կողմից արտահայտված կարծիքների հիման վրա:

Կլոր սեղանին մասնակցում էին անկախ վերլուծաբաններ, պետական պաշտոնյաներ, ինչպես նաև քաղաքացիական հասարակության և միջազգային կառույցների ներկայացուցիչներ:

Քննարկումը կազմակերպվել էր «Աջակցություն Հայաստանում քաղաքացիական հասարակության զարգացմանը միտված քաղաքականության, կանոնակարգման և ինստիտուցիոնալ բարեփոխումներին» ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է «Քաունթերփարթ ինթենեյշնլ» կազմակերպության աջակցությամբ: